

գիրը աւելի զօրաւոր դարձնելու համար, որոշեց իր կողմէն ալ նուէրներով դեսպանութիւն մը յղել հասպէշ թագաւորին և թագուհիին :

Էմանուէլ՝ հասպէշ և փորթուկալ գինակցութեան մը տարողութեան մասին մեծ ցնորքներ կը սնուցանէր. կը կարծէր թէ երկու պետութիւններուն միացեալ ոյժերը պիտի բաւէին Օսմ. կայսրութիւնը կործանելու. Պոլիսը վերագրաւելու և Արեւելքի մէջ քրիստոնեայ տիրապետութիւնը հաստատելու, վասնզի Մատթէոս եպս. Եթովպիոյ զօրութիւնն ու հարստութիւնը իրականէն տամնապատիկ աւելի ներկայացուցած էր իր շուրջը չափազանց միամիտ հետաքրքրութիւն մը տեսնելով հանդէպ Ափրիկէի կեդրոնը մեկուսացած այս քրիստոնեայ և առասպելական երկիրին :

Մատթէոս և փորթուգալեան դեսպանութիւնը նաևատորմիզով մը հասան Հնդկաստան և անկէ 1520 Ապրիլ 16ին Հնդկաստանի կառավարիչ և նաևատորմիղի հրամանատար Տիեկոյ Լորէզ աէ Սքուէլլրա ծովակալին հրամանին տակ, 24 նաւերու տորմիզով մը ժամանեցին Մասուա, որ այն ատեն ծովափէն քիչ հեռաւորութեամբ կղզի մըն էր : Տեղացիները փախան ցամաք, պաշտպանութիւն գտնելու համար տեղւոյն հասպէշ հրամանատարէն. փորթուկալցիք գացին մօտակայ նաւահանդիսար՝ Արքուիէտոյ (Արքիէթոյ՝ ըստ նալթանդեանի) :

Փորթուգալցւոց նաւերէն մէկը գերի բռնեց տեղացիներէն երեք հոգի, որոնք ապշեցան իմանա-

---

(1) Քարէզին վրայ շրջայ այս երկու անուններով տեղ մը, միայն Մասուալէն հարաւ, խոր ծոցի մը խորը կայ Արաֆալիս (Arafalia) քաղաքը, որ շեմ գիտեք թէ կրնա՞յ նոյնացուիլ այս քաղաքին հետ :